



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ.  
«ԲՆԱՊԱՌԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

«26» 03 2018թ



## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ 22

Զեռնարկողը՝

**«ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ**

ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան,  
Արմանիս թաղամաս

Գործունեությունը՝

**Դեղին և Սև գեղերի ավազանում երկարանահեղախուզական  
աշխաղանքների իրականացման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահավման հայդ  
ՀՀ Լոռու մարզ**



Վ. Սահակյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՌՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 22

«26» 03 2018թ.

**ՀՀ Լոռու մարզի Դեղին և Սև գետերի ավազանում երկարանսահետախուզական  
աշխատանքների իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ**

Զեռնարկող՝

«Սագամար» ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ, կից փաստաթղթեր

Գործունեության կատեգորիա՝

/Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան, Գյուլազարակ,

Շենավան և Սարահարթ համայնքներ

«ՀՀ Լոռու մարզի Դեղին և Սև գետերի ավազանում երկարանսահետախուզական  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը  
մշակվել է շրջակա միջավայրի հնարավոր բացասական ազդեցությունները կանխարգելելու,  
նվազեցնելու և գործունեության ազդեցության վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն  
ստանալու նպատակով։

«ՀՀ Լոռու մարզի Դեղին և Սև գետերի ավազանում երկարանսահետախուզական  
աշխատանքների կատարման սույն աշխատանքային ծրագիրը կազմվել է 'Սագամար' ՓԲԸ  
ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով։

Աշխատանքների իրականացման նպատակն է հանքային դաշտի սահմաններում  
նախկինում, ինչպես նաև 2018-2020թ.թ. ընթացքում կատարվելիք աշխատանքների  
արդյունքներով ճշգրտել և լրացնել հանքերևակման տարածքում առանձնացված  
հեռանկարային տեղամասերի երկրաբանական կառուցվածքի, հանքայնացված գոտիների և  
հանքերակների ծևաբանության ու տեղադրման տարրերի, օգտակար հանածոյի նյութական  
կազմի, որակի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև տալ առանձին տեղամասերիի  
հեռանկարային գնահատականը։

Նախատեսվող գործունեության նպատակը Դեղին և Սև գետերի ավազանում հայտնի  
հանքաերևակումների արդյունաբերական նշանակության գնահատումն է, այդ թվում  
երևակման հանքայնացման ինտենսիվության, միներալային կազմի, տարածական,  
տեղադիրքային և կառուցվածքային առանձնահատկությունների պարզաբանումը։ Այս  
տարրերի պարզաբանումը հնարավորություն կնծենի հետագայում դրանց յուրացման և  
Արմանիսի հարստացուցիչ ֆարբիկայում վերամշակման նպատակով ներգորավվելու  
հնարավորությունների մշակումը։ Աշխատանքների ընթացքում նախատեսվում է նախկինում  
իրականացված հետախուզական աշխատանքների ցանցի խտացում, դրանց վրա նոր  
հորոտանցքերի հորոտում։ Որոնողական և հետախուզական աշխատանքներ են



սախատեսվում ուղարակիմքային դայլային մարմնի տեղակայման ուղղությամբ նոր հանքաբերևակումների որոնման և ուսումնասիրման նպատակով:

Դեղին և Սև գետերի ուսումնասիրության տարածքը գտնվում է Ստեփանավան քաղաքի Արմանիս թաղամասից 10կմ, Ուրասար գյուղից 7.5 կմ հարավ համանուն գետերի ջրահավաք ավազանի սահմաններում, որտեղ նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Ուսումնասիրության տարածքը ընդգրկում է << Լոռու մարզի 4 համայնքների հողատարածքներ 29,8քառ.կմ ընդհանուր տարածքով՝ Ստեփանավան համայնքից 5.9 քառ.կմ, Գյուլագարակ համայնքից 19.5 քառ.կմ, Սարահարթ համայնքից 2.6 քառ.կմ և Շենավան համայնքից 1.8կմ քառ.:

Շրջանի կլիման մեղմ է, խոնավ, ինչով բացատրվում է տեղի ջրային ցանցի ջրառատությունը, ողի բազմամյա տարեկան միջին ջերմաստիճանը ամռանը կազմում է  $+14^{\circ}\text{C}$ , ձմռանը՝  $-15^{\circ}\text{C}$ : Տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 660մմ: Ձյան ծածկույթը ուսումնասիրությունների տարածքում մոտ է 4-5 ամիս:

Տարածաշրջանի հիմնական ջրային ռեսուրսը Զորագետն է իր վտակներով: Անմիջապես հանքավայրի մոտով է հոսում Զորագետի աջակողմյան վտակներից՝ Զքնաղը:

Տարածաշրջանում գործում է Գյուլագարակի սենու պետական արգելավայրը, որը ներկայացվող տեղանքից գտնվում է ավելի քան 5 կմ հեռավորության վրա և բնականաբար երկրաբանական ուսումնասիրությունները կամ հանքարդյունահանման գործունեության չի կարող որևէ ազդեցություն ունենալ արգելավայրի վրա: Անմիջապես ուսումնասիրության ներգրավվող տարածքներում << բոյսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, դրանց աճելավայրեր, ապրելավայրեր, միգրացիոն ուղիներ չեն արձանագրվել:

Ուսումնասիրության տարածքն ընդգրկող բոլոր չորս համայնքների հողատարածքներն ել արոտավայրեր են: Այդ տարածքներում բացակայում են պատմամշակութային հուշարձաններ և հատուկ պահպանության հողեր: Ուսումնասիրության տարածքում կան անտառապատ հատվածներ, որոնք կազմում են ընդհանուր առմամբ 1.5%, դրանք կզգականման առանձնացված տարածքներ են, որոնցում որևէ աշխատանքներ նախատեսված չեն: Հանքավայրում և նրան մոտ տարածքներում սողանքային մարմիններ հայտնի չեն:

Տարածքի մի քանի հատվածներում ընդհանուր առմամբ 50 հա տարածքի վրա նախատեսված են հետախուզական հորոտման աշխատանքներ և տոպոմարկեցներեկան աշխատանքներ: Աշխատանքների ընթացքում օգտագործվում են նախկինում կառուցված գրունտային ճանապարհներ, նորերի կառուցում չի նախատեսվում, քանի որ չկա դրա անհրաժեշտություն: Բոլոր աշխատանքներից հետո, որոնք կատարվելու են հողաբուսական շերտի խախտմամբ, տարածքները ուեկուլտիվացվելու են: Ուսումնասիրությունների ընթացքում չեն իրականացվելու հորոտապայթեցման աշխատանքներ: Աշխատանքների ընթացքում հողային, ջրային և օդային ավազանի աղտոտում տեղի չի ունենալ:

Նախատեսվում են հետևյալ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ՝

- Ուսումնասիրության տարածքի սահմաններում հայտնի հանքակուտակների և հանքաբերևակումների մակերեսում տարածման և եզրագծման նպատակով նախատեսվում է 1:10000 մասշտարի երթուղիների անցում, նպատակ հետապնդելով ճշգրտել հանքային դաշտի երկրաբանական կառուցվածքը, հայտնաբերել նոր հանքային մարմիններ և նմուշարկել: Վերոհիշյալ աշխատանքների ծավալը կազմում է 2000 կմ:

- Հանքային դաշտում առկա հիդրոթերմալ փոփոխված գոտու քարտեզագրման, դրանում հանքայնացման բնույթը, հանքային մարմինների և հանքակուտակների և դրանցում մետաղական օգտակար բաղադրիչների տարածման ու բաշխման օրինաչափությունների, մարմինների ծևաբանական առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակով նախատեսվում է իրականացնել հետախուզաառուների անցում: Այս նպատակների համար նախատեսվում է իրականացնել 5000մ<sup>3</sup> մակերեսային փորվածքների անցում: Հանքայնացման տարածման ուղղությամբ անընդհատության

պարզաբանելու նպատակով՝ նախատեսվում է հանքայնացված գոտիները նմուշարկել ամբողջ հղորությամբ: Լեռնային աշխատանքները նախատեսվում է իրականացնել ձեռքի աշխատանքով: Ընդհանուր առմամբ ուսումնասիրության տարածքում նախատեսվում է անցնել 5000մ<sup>3</sup> հետախուզառուներ և իրականացնել բնական մերկացումների մաքրվածքներ:

- Նախկին տարիներին ուսումնասիրված տեղամասերում հանքայնացման եղագաման, հանքային մարմինների անընդհատության պարզաբանման, հանքաքարերի որակատեխնոլոգիական և քանակական հատկությունների ուսումնասիրության և լրահետախուզման նպատակով նախատեսվում է հետախուզական ցանցի խտացում, որոնց վրա պետք է իրականացնել հորատման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել կարճամետրաժ (մինչև 50 մ) և հետախուզական հորատում (մինչև 200 մ): Հորատումը պետք է իրականացվի կրկնակի հորատահանուկային գործիքային եղանակով, որը կապահովի հորատահանուկի ելքի առնվազն 95% ելք: Ընդհանուր առմամբ սույն նախագծով նախատեսվում է հորատել մոտ 2000մ կարճամետրաժ և 5000մ հետախուզական հորատանցքեր: Հորատանցերի տեղադիրքն ուսումնասիրության տարածքում և հանքաերևակումների սահմաններում՝ կվորոշվի երկրաբանական հանութային և լեռնային փորվածքների նմուշարկման արդյունքներով:

- Ուսումնասիրության տարածքում հանքային մարմինների ուսումնասիրության, խորքում դրանց հետապնդման, ինչպես նաև չորրորդական նստվածքների զարգացման հատվածներում հանքակուտակների հայտնաբերման և ուսումնասիրության նպատակով նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրություններ երկրաֆիզիկական էլեկտրա-հետախուզական մեթոդների կիրառմամբ: Հիմնականում նախատեսվում է աշխատանքները իրականացնել էլեկտրահետախուզական ԲՅՊ և ԲՅՅ մեթոդները: Երկրաֆիզիկական ուսումնասիրության այս մեթոդներով նախատեսվում է ուսումնասիրել մի քանի առանձնացված տեղամասեր ընդհանուրը 4.0 կմ<sup>2</sup> տարածքում:

- Մերկացումներում և լեռնային փորվածքներում նմուշարկման հիմնական ձևը ընտրված է ակոսային նմուշարկումը: Հաշվի առնելով, որ հանքային գոտիներում և երակներում հանքայնացումը բաշխված է խիստ անհավասարաչափ, նմուշի ակոսի (հանույթը) ընդունվում է 10x5սմ (լայն x խորություն): Փորվածքներում ակոսի երկարությունը որոշվում է կախված հանքային մարմնի հզորությունից, ինչպես նաև փոփոխվում է կախված հանքային մարմինների կառուցվածքային առանձնահատկություններից:

Մերկացումներում ակոսը վերցվում է հանքային մարմնի տարածմանը ուղղահայաց: Օգտակար հանածոյի պարունակությունների ուսումնասիրության նպատակով նմուշարկումը իրականացվում է ըստ սեկցիաների, որտեղ նմուշի երկարությունը ընդունվում է 1 մ:

Ընդամենը հանքային դաշտի երևակումներից և հանքայնացված տեղամասերից կվերցվի 1000 ակոսային նմուշ:

-Հորատման աշխատանքների արդյունքում ստացված հորատահանուկը ենթակա է նմուշարկման: Նմուշարկման պետք է ենթարկվի հորատահուկի հանքայնացված հատվածները, իսկ դատարկ ապարների հատվածներում նմուշարկումը կիրականացվի ընդհատումներով՝ 5-10 մ հատվածից մեկ նմուշ: Հանքայնացված, հանքային տեղամասերը պարփակող հատվածներում նմուշարկումը կիրականացվի անընդհատ: Հորատահանուկի նմուշարկումը կիրականացվի հորատահանուկի երկու կեսի մեխանիկական սղոցման եղանակով, որի կեսը կպահպանվի մինչև աշխատանքների ավարտը և անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել տեխնոլոգիական նմուշների կազմման համար: Ընդհանուր առումով հորատահանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 1500 նմուշ:

- Տեղամասերում հանքաքարի նյութական կազմը և դրա վերաբաշխման տեխնոլոգիական հատկությունները ուսումնասիրելու նպատակով նախատեսվում է վերցնել 5ս քաշով 3 համախառն նմուշ, որոնք հետազոտվելու են <<Սագամար>> ՓԲԸ լաբորատորիայում:

- Դաշտային աշխատանքների ընթացքում հանքաերևակումներից և տեղամասերից վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն անալիտիկ ուսումնասիրությունների: Սահմանված կարգով դրանց համար հավատարմագրված լաբորատորիաներում:

- Հանքային դաշտի ապարների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է իրականացնել 50 թափանցիկ և 30 հանքային հղկուկների ուսումնասիրություն: Շիխային հանույթի ընթացքում վերցված նմուշները կենթարկվեն միներոլգիական ուսումնասիրման: Ընդհանուր առումով՝ 80 նմուշ:

- Հանքաքարի ծավալային զանգվածի որոշման համար նախատեսվում է հետազոտել ամեն հանքաերևակումից երկուական նմուշ ամեն տարատեսակից: Ընդհանուր առմամբ 20 մետրարարյին նմուշ:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում իրականացված բոլոր երկրաբանական երթուղիները, լեռնային փորվածքները և հորատանցքները պետք է փաստագրվեն, որի ընթացքում դրանք պետք է տեղակապվեն տեղանքի հետ: Պետք է իրականացվի հանքային մարմինների չափագրում, նմուշարկում, փորվածքների պատկերագրում և տեղադրում քարտեզների վրա: Իրականացվելու է տեղայնական քարտեզների, պլանների, նմուշարկման մատյանների վարում:

- Նախատեսվում է հանքաերևակումների սահմաններում իրականացնել 1:1000 և 1:2000 մասշտաբի տոպո հանությային աշխատանքներ: Լեռնային փորվածքները, հորատանցքները և պետք է գործիքային եղանակով ամրակապված լինեն տոպոհիմքերի վրա: Իրականացվելու է մարկշեյտերական սպասարկում ամբողջ դաշտային աշխատանքների ընթացքում:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո օգտակար հանձնություն կարգավոր արդյունաբերական նշանակությունը գնահատելու նպատակով բոլոր հանքաերևակումների համար կկազմվեն տեխնիկա-տնտեսական հիմնավորումներ և գեկույցներ:

Աշխատողների և բեռների փոխադրումը նախատեսվում է իրականացնել 1-ին և 2-րդ կարգի գրունտային ճանապարհներով 2-8տ բեռնատարողությամբ ավտոմեքենաներով:

Լեռնային փորվածքներում պետք է իրականացնել փորվածքների հետլցման և ռեկովտիվացման աշխատանքներ:

Նախագծային աշխատանքների իրականացման արդյունքում կգնահատվեն <<Հանքափոր>> և Սև գետի ծծումբ-հրաքարային հանքաերևակումների, Դեղին գետի պղնձի, <<Մեծ փլուզում>> տեղամասի արդյունաբերական պաշարները, C<sub>1</sub> և C<sub>2</sub> կարգերով:

Որոնողական աշխատանքները նախատեսվում է իրականացնել հորատման միջոցով: Հետախուզման նման եղանակը շրջակա միջավայրի վրա բնապահպանական տեսակետից կունենա թույլ ազդեցություն: Հետախուզական աշխատանքները նախատեսվում են իրականացնել հաշվի առնելով ընդերքի և շրջակա միջավայրի պահպանության մասին <<օրենսդրության պահանջները>>: Հետախուզական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված նախատեսվել են հետևյալ միջոցառումները:

• Հանքերևակումում և ավտոճանապարհների վրա մթնոլորտային օդի մաքրության պարբերաբար հսկողություն:

• Փոշեզրկման նպատակով արտադրական գոտիներում (հորատիրապարակներ, ճանապարհներ) ջրման աշխատանքների իրականացում:

• Օգտագործվող ագրեգատները աշխատեցնել սարքին վիճակում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով:

Հետախուզության ժամանակ թափոնակույտեր չեն առաջանա և լրացնուիչ տարածքներ չեն գրաղեցվի: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում առաջացած հորատման թագագլխիկների թափոնները, նավթամթերքների և քայլութերի մնացորդները, ընկերության սեփական ավտոտրանսպորտով տեղափոխվելու են

Սագամար ՓԲԸ-ի արտադրական տարածք: Ստորև բերվում է բնապահպանական միջոցառումների ծրագիրը:

Նախատեսվող աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել հողի բերի շերտի հանում և պահպանում հատուկ առանձնացված վայրում հետագա ռեկուլտիվացիայի համար:

Տրանսպորտային միջոցների աշխատանքի ժամանակ հնարավոր է ծխագագերի և անօրգանական փոշու արտանետումներ, որոնց նվազեցման համար նախատեսվում է հրականցնել մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, շարժիչների աշխատանքի կարգավորում, արտանետման խողովակների վրա զտիչների տեղադրում:

Օգտագործված յուղերից, վառելիքի թափվածքից, հորատման պոլիմերային լուծույթից հողերի աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է դրանք կուտակել անջրաթափանց տակառներում: Հողերի աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է տարեկան երկու անգամ իրականացնել հողերի նմուշառում:

Հետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հորատահրապարակների տարածքի ռեկուլտիվացիա, որի ընթացքում հորատման հարթակների կառուցման և մակերևութային փորվածքների անցման ժամանակ կուտակված հանքային մարմինները ներփակող արմատական ապարները կփովեն և կհարթեցվեն, կծածկվեն առկա հողաբուսական շերտով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գումարը հաշվարկվել է 13.0մլն դրամ:

**Եղրահանգումներ.** Ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր, տեղային, թույլատրելի նորմերի սահմաններում: Նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք կնվազեցնեն գործունեության ազդեցությունը շղակա միջավայրի բաղադրիչների վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

### Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելնելով տարածքի յուրահատկությունից, անհրաժեշտ է խստագույն հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումներին և սոցալ-տնտեսական ծրագրին, իսկ դրանց չքավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրություններում և հեռացումն (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:
5. Որոնողահետախուզական աշխատանքների իրականացման արդյունքում՝ տեղամասում առկա ջրային ավազանի վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառման նպատակով անհրաժեշտ է ուղղորդվել

ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 20-ի թիվ 64-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով, իսկ անտառային հողերում՝ ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի N 1045-Ն որոշման պահանջներին համապատասխան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Սագամար>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված <<Լոռու մարզի Դեղին և Սև գետերի ավագանուած երկարանահետախուզական աշխատանքների իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջներիի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



## 2. Զուրկացյան